

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՆԱՓՄՈՒԹԻՒՆ

Հաստ բժ. Դեսկիլոէի

Ոչ միայն անհատները, ալլ և ամբողջ ազգեր շատ անգամ չարաշար կերպով պատժում են իրենց տգիտութեան և վատ կրքերի զնորհիւ: Դեռ շատ հին ժամանակներից փիլիսոփաները և գիտնականները փորձել են և փորձում են ուսումնասիրել մարդկարին կրքերը և նրանց ազգեցութիւնը մարդկային կեանքի և գործերի վրալ: Գիտնական Դէսկիւրէի փոքրիկ զրքոլկը հապարտութեան և սնափառութեան վերաբերեալ ալդտեսակի գրուածներից մէկն է, որի գլխաւոր մասերի փոխադրութիւնը կարծում ենք անօգուտ չի լինի հայընթերցողի համար:

Նաև կեանքի և պատմութեան քիչ թէ շատ ուշադրութեամբ հետևողը անկասկած նկատած կլինի, որ մեր ազգի շատ թերութիւններից մէկն էլ սնափառութիւնն է: Բաւական է կարդալ մի երկու հատոր մեր կաթուղիկոսների գործունէութեան վերաբերեալ դօկումէնտներից համոզուելու, որ ամեն մէկը նրանցից մեծ ձգտում է ունեցել ոչնչացնել միւսների գործերի նշանակութիւնը և ինքը երկաւ, ձգտել է նսեմացնել շատ անգամ այլոց մեծ և առաքինի գործերը միմիայն սեփական անձնաւորութիւնը փալլեցնելու համար: Մեր ժագաւորների և նախարարների ու կաթուղիկոսների կուների մէջ էլ շատ անգամ այս կամ այն անձնաւորութեան սնափառութիւնն ահազին դեր է խաղացել:

Սղգերի կրթութիւնը դարերի ընթացքում է կատարում, ուստի և զարմանալի չէ, որ ալսօրուալ մեր կեանքում դեր խաղացողների կամ ալսպէս ասած գործիչների շրջանում էլ սնափառութիւնը մեծ տեղ է

բանում և շատ անգամ իրանց արժանաւորութիւններով
և խելքով ողորմելի մարդիկ շարունակում են մեծա-
մեծ վնասներ հասցնել: Եւ այս բոլորը կատարւում է
սնափառութիւնից: Բայց դառնանք հեղինակին:

I

Ինքնայարգութիւնը և շրջապատողներից լարգուե-
լու ցանկութիւնը, ասում է հեղինակը, հասարակական
կեանքով ապրելու պահանջից է ծագում: Բայց որքան
էլ կարեսոր է, որ մարդ ինքն իրան լարգէ և աշխատի
ուրիշներից լարգուելու, սակայն այս մարգարիին պա-
հանջը բնական սահմանը անցնելուց յետոյ կորցնում է
իւր օգտաւէտութիւնը և դառնում է հպարտութիւն
և սնափառութիւն:

Խսկապէս հպարտութիւնն էլ ոչ այլ ինչ է,
եթէ ոչ լարգանք դէպի սեփական անձը, բայց
տարբերութիւնը նրանումն է, որ հպարտ մար-
դը անպատճառ չափազանցնում է իւր արժանաւորու-
թիւնը, աշխատում է իրեն ուրիշներից աւելի լարգել
տալու և առհասարակ իշխանու ուրիշների վերալ: Հը-
պարտութիւնը մի տեսակ հոգեկան հիւանդութիւն է,
որ կտպուած է ինում միշտ տգիտութեան հետ, որով-
հետեւ խսկական լուսամիտ մարդը հպարտ չէ կարող լի-
նել: Հպարտութիւնն էլ ամեն մի հիւանդութեան պէս
զանազան աստիճաններ և տեսակներ ունի: Ալսպէս՝
հպարտութիւնը երևան է գալիս գոռոզութեամբ, ինք-
նագոհութեամբ, լանդգնութեամբ, և ալլն: Սնափառու-
թիւնն էլ ուրիշներից գսվասանք ստանալու սաստիկ
պահանջ է և սնափառ մարդը միսիայն մի ձգտում ունի,
որ ուրիշները ուշադրութիւն դարձնեն նրա վրալ, խօ-
սեն նրա մասին և ուրիշ ոչինչ: Մէկը ձգտում է ու-
շադրութիւն գրաւելու իւր մտացածին ձեռնարկութիւն-
ներով, միւսը իւր հագուստով, երրորդը իւր գեղեցկու-
թեան մասին հոգալով, չորրորդը ինքնագոհութեամբ և
ալլն: Ալս բոլորը այն տեսակ մարդիկ են, որոնց տի-
բում է միւսոյն կիրքը: Ալսպիսով թէ իւր կատարած
և չկատարած գործերը գովաբանողը, թէ շոալլ, և վատ-

նող և թէ գոռոզը միենոյն տեսակի մարդիկ են, որոնք գերի են հպարտութեան և սնափառութեան։ Մրանք ձգտում են ուրիշներից բարձր երեան և ալն տեսակ փառքի հասնել, որին իսկապէս արժանի չեն։ Եւ շատ անգամ այս տեսակ մարդիկ այնքան կուրանում են իրանց կրքերով, որ իրօք կարծում են, թէ նրանք ուրիշների նման մարդիկ չեն, ալ մի ուրիշ տեսակ կամ ուրիշ կերպ ստեղծուած։

Հպարտը և սնորփառը թէպէտ և իրար շատ նման են, բայց տարբերւում են նրանով, որ հպարտը առհասարակ մեծ կարծիք ունի իւր մասին և կարծում է թէ ինքը պակտութիւն չունի, իսկ սնափառը ապրում է միմիայն ուրիշների կարծիքով։ Հպարտը վերաւորւում է երբ որ մէկը ցոյց է տալիս նրա թերութիւնները։ Իսկ սնափառը երբ որ նրա վերալ ուշադրութիւն չեն դարձնում։

Յունաց փիլիսոփայ Դիոգինէսը յալտնի սնափառ մարդ էր և իւր տարօրինակ վարմունքներով աշխատում էր գրաւելու ժողովրդի ուշադրութիւնը։ Մի անգամ նա գուրս էր եկել իւր տակտուից և կանգնել կտուրից թափուող ջրի տակ։ Անց ու դարձ անող մարդիկ զարմանում էին և բարձրաձայն ցաւակցում փիլիսոփայի վարմունքին, բայց Պղատօնը, որ պատահմամբ տեսաւ այս գէպքը՝ տաց—եթէ իրօք խղճում էք Դիոգինէսին՝ անցէք առանց նրա վերալ ուշադրութիւն դարձնելու։ Սնափառները առհասարակ ծաղրալի են լինում, որովհետև ցուցամոլութիւնը նրանց կուրացնում է։ Հարուստ երեալու համար շատերը ահագին ծախսեր են անում, խօսում են իրենց չունեցած գործերի և յաջողութիւնների մասին և ալլն և ալլն։ Սնափառութեան և հպարտութեան մօտիկ յատկութիւնն է և ինքնավստահութիւնը, ինքնագոհութիւնը, գոռոզութիւնը և յանդգնութիւնը։ Ինքնավստահ մարդը խորին կերպով համոզուած է, որ ինքը ունի մեծ արժանիքներ և նոյն իսկ տաղանդ, թէև իրօք նա գուրկ է ալդ բոլորից։ Ինքնագոհ մարդը միշտ մեծացնում է իւր արած գոոծերի և զբաղմունքների նշանակութիւնը և միշտ խօսում է նրանց մասին։ Գոռոզ մարդիկ

միշտ մտածում են, որ իրենք ուրիշներից բարձր են և այս պատճառով երբէք պարզ և մտերիմ յարաբերութեան մէջ չեն մտնում այն տեսակ մարդկանց հետ, որոնք մի մազի չափ ցածր են նրանցից ծագումով, հարըստութեամբ, պաշտօնով կամ ընդունակութեամբ: Սակայն այս տեսակ մարդիկ բոլորն էլ սահմանափակ խելքի տէր և բժամիտ են: Հպարտութիւնը և սնափառութիւնը սակայն կարծես մարդկալին կրքերի արմատն են կազմում: Ոչ բոլոր մարդիկ ագահ են, ոչ բոլորը արբեցող կամ որկրամոլ են, բայց համարեա բոլորը հպարտ են և յալտնի չափով սնափառ: Գիտնականը և տգէտը, իմաստունն ու լիմարը, քաղաքակիրթ մարդը և վալրենին, ուժեղը և թուլը, աղքատն ու հարուստը, գեղջուկն ու իշխանը - բոլորն էլ յալտնի չափով հպարտ են և սնափառ, բայց տմեն մէկը իւր տեսակով է արտայատում այս կրքերը: Այսպիսով յալոնի է, որ զօրեղները ունին իշխանութեան հպարտութիւն, իշխանազրւնները արեան հպարտութիւն, իսկ հարուստը հարստութեան, աղքատը խեղճութեան հպարտութիւն, որպէս և կալ գիտնական և յամառութեան հպարտութիւն:

Պասկալի խօսքերով հպարտութիւնը և սնափառութիւնը գերազանցում են մարդկալին բոլոր արատները: Հպարտութիւնը կամ ստիպում է ծածկելու թերութիւնները և կամ ընդհակառակը հպարտութիւնից ստիպուած մարդիկ աւելի տեսանելի են դարձնում իրենց արատները՝ ձգտելով զարմացնելու ուրիշներին: Հպարտութիւնը շատ անգամ այնպիսի զօրեղ կերպով է տիրում մարդուն, որ նա պատրաստ է լինում նոյն իսկ սեռնելու, միայն թէ կարողանալ իւր մասին խօսել տալու: Նոյն հեղինակի կարծիքով, այդ այնքան յատուկ է մարդուն, փոքրից մինչև մեծը, որ խոհարարը և համալը գիտնականի և փիլիսոփալի պէս հոչակուել են կամենում և ձգտում են ունենալ իրենց երկրպագուները:

Փառքի դէմ գրող հեղինակները ձգտում են նշանաւոր գրողի փառքի հասնել, իսկ կարդացողները հէնց կարդալու մէջ են տեսնում իրենց փառքի

գրաւականը։ Սակայն Պասկալը չէ խուսափում խորհուրդ տալու թէ ինչպէս պէտք է վարուի մարդ։ «Մարդս, ասում է նա, պէտք է իւր արժէքը ճանաչէ և իրեն պիտի լարգէ, որովհետև նա ընդունակ է բարիք անելու, բայց նա պէտք է չմոռանալ, որ նա ընդունակ է և չարիք ստեղծելու և ահա իւր այս յատկութիւնը պիտի ատէ։ Մի խօսքով պէտք է քննադատօրէն և սառն կերպով վերաբերուել դէպի ինքը։ Այս ճանապարհով միայն մարդ չի կուրանալ իւր կարծեցեալ արժանիքներով և կարող է կատարելագործուել։

II

Հպարտութեան և սնափառութեան յաճախակի պատճառները լինում են կրթութիւնը, շրջանը, քսութիւնը, պատիւները, հարստութիւնը և տաղանդը։ Բացի այս պէտք է իմանալ, որ հպարտութիւնը և սնափառութիւնը առհասարակ տգիտութեան և յիմարութեան հետ անբաժան են։ Ինչ խօսք, որ հիւանդութիւնը, նիւթական կարիքը կամ գժբաղտութիւնը մարդուն չեն տրամադրում ինքնագոհութեան։ Այս զգացմունքը յաճախակի տիրում է հարուստ և առողջ մարդկանց։ Տեմպերամենտը նոյնպէս նշանակութիւն ունի։ Զգալին և մաղձոտ մարդիկ աւելի ենթակալ են հպարտութեան։

Տղամարդիկ աւելի տրամադիր են հպարտութեան, իսկ կանայք սնափառութեան։ Դիտողութիւնը ցոյց է տալիս, որ ոչ բոլոր մարդիկ հաւասարաշափ բռնուած են հպարտութեան կրքով։ Բանաստեղծները, գերասանները, գրագէտները և այլն աւելի ենթակալ են այս զգացմունքին։ Հին ժամանակներում հպարտութեամբ յալտնի էին ստոլիկեանները, փարիսեցիք և ցինկները, օրինակ՝ Դիոգինէսը և Արիստօֆանը, որոնցից վերջինին մի անգամ Սոկրատէսը ասաց, որ նրա սնափառութիւնը շորերի միջից էլ է երևում։ Ամեն ազգ կամ ցեղ մի յալտնի կերպով է արտայալտում իւր հպարտութիւնը։ Անգլիացիք, օրինակ, հպարտութեամբ ասում են, որ նրանք նշանաւոր երաժիշտներ են,

Քրանսիացիք պարծենում են իրանց գիտնականութեամբ, իսպանացիք ասում են, որ իրը թէ իրենք նշանաւոր զինուորներ են ևալլն: Դեռ Նապօլէոնը ասել է, որ անգլիական բարձր շրջանի հասարակութիւնը հպարտ է, իսկ քրանսիականը սնափառ:

III

Բոսուէտը ասում է, որ հպարտութիւնը ուրիշներից բարձրանալու և նրանց իշխելու մի անզսպելի կիրք է: Մարդս մի թոյլ և չնչին արարած է, որ ստկալն մըշտապէս ձգտում է հարստանալու և մեծանալու. երբոր նա չի կարողանում մեծանալ իւր բնութիւնը լաւացնելով և կատարելազգործուելով՝ նա դիմում է արտաքին ձեւերին և զարդարանքներին: Հարստութիւն ձեռք բերելով՝ նա կարծում է որ ինքը նոյնպէս մեծանում է: Պատմութիւնը շատ օրինակներ ունի ծալրալեղ հըպարտութեան: Փիլիպպոս մակեդոնացին ալնքան հպարտացաւ, որ վախենում էր մոռանալ թէ ինքը հօղեղն է, ուստի և ամեն օր ինքն իրեն կրկնում էր. — մի մոռանար, որ գու մարդ ես. — Պարսկաստանը նուաճելուց յետոյ Աղէքսանդր Մեծը պահանջեց, որ իրեն աստուածացնեն: Դոմիկիանոս կայսրը նոյնպէս հրամայեց, որ իրեն Աստուած անուանեն, իսկ Լուգովիկոս ասանեչորսերորդը հրամայեց իւր պատկերը արեգական նման նկարել: Նաբութողոնոսորը հրամայեց իւր արձանը ձուլել և պաշտել Աստուածու տեղ:

Մինչև անգամ գիտնականների շրջանում, ուր աւելի շատ են լինում խոհուն մարդիկ, սնափառութիւնը շատ անգամ նրանց էլ է վարակում: Շատ անգամ սահմանափակ ընդունակութիւնների տէր գիտնականներ սնափառութեան ազդեցութեան տակ այն տեղն են հասնում, որ ուժով կամենում են ուրիշների վզին փաթաթել իրենց մտքերը, ստիպում են լսելու իրենց երևակաբարութեան արդիւնքները: Մի փոքր գեղեցիկ կերպով խօսել իմացողը, մի քանի ոտանաւոր գրողը երաւունք է համարում ամեն տեսակ հարցեր լուսելու և իւր վճիռները անսխալ համարել և ստիպել ուրիշներին ընդունելու այդ վճիռները: Բայց դուք փորձե-

ցէք ցոլց տալ նրանց գրուածների թերութիւնները, նրանց սխալները և գնահատել ըստ արժանուոյն, նը-քանց սնափառութիւնը, որ ոչ ոք չէր կարող կարծել թէ նրանք կունենան, ծալբալեղ կերպով երևան կգալ և նրանք սաստիկ կվերաւորեն։ Միթէ կարելի է, որ հեղինակները սխալուեն, միթէ կարելի է հերքել նը-քանց անսխալականութիւնը։ Սրանից կակսուի մի բա-նակուլ, որ տաքանալով կվերջանալ խարտառակ հալ-հուանքով։ Փքուած բանաստեղծներն և գիտնականները կսկսեն ամենաստոր պասկվիլներ յօրինելու և հալհուե-լու բոլորին։ Ալատեղն է հասցնում սնափառութիւնը մինչև իսկ լաւագոյն մարդկանց, էլ ապա ինչ կարելի է ասել հասարակ մահկանացուների մասին։ Սնափա-ռութիւնը մարդու լաւագոյն զգացմունքները պղտո-ըում է, փշացնում է լաւագոյն մտքերը և մժութեան մշուշով է պատում խելքը ու բանականութիւնը։ Հպարտ և սնափառ մարդիկ հասարակութեան մէջ աշ-խատում են լու տեղ նստել և ուշադրութիւն գրաւել։ Հպարտը սակայն աւելի վատահ և յանդուգն է։ Նա փքուում է և աշխատում է նմանուել հզօր իշխանի, որ աշխարհի բաղտն է որոշում։ Նա գլուխը բարձր բըռ-նած ուրիշների վրալ վերևից է նայում։ Նրա քայլուած-քում, շարժուածքներում և բոլոր ձեւերում երևում է մի մարդ, որ ձգտում է իշխել և տիրել։ Սնափառը այսպէս ինքնավստահ չէ։ Նա գլուխը բարձր չէ պա-հում և նրա քայլուածքը փքուն չէ, ալլ. ընդհակառա-կը նա սիրալիր է և մեղմասուն։ Նրա շարժուածքը գիւրեկան է, նա աշխատում է գրաւել իրեն։ Հպարտը ա-ռանձին տեսակ քայլուածք ունի, նա կարծես ամուր կերպով լենուում է գետնին, որի մասին կարծում է թէ արժան չէ իւր ստներին։ Սնափառը քայլում է թեթև, ներդաշնակ շարժուածքով, կարծես կամացուկ ուզում է մէկին մօտենալ։ Մի խօսքով հպարտը ձգտում է բարձր լինել բոլորից, իսկ սնափառը մտածում է միայն, որ նրա մասին փառքը տարածուի որքան կարելի է հեռու։

IV

Հպարտութեան և սնափառութեան կորւտաբեր հետևանքները բազմաթիւ են: Հատ յանցանքների արմատը մարդկալին հոգու ալս յատկութիւնների մէջ է կայանում: Հպարտութիւնը և սնափառութիւնը շատ անգամ առիթ են դառնում վրէժինդրութեան, խանգուտութեան, կեղծաւորութեան, սպանութեան և ինքնասպանութեան: Պետական մարդկանց հպարտութիւնից և սնափառութիւնից ծագել են բազմաթիւ պատերազմներ և աղէտներ, ուր տասն հազարաւոր մարդիկ են կոտրուել: Նոյն պատճառից առաջացել են և լեղափոխութիւններ և ներքին փոխադարձ կոիւներ, որոնք խանգարել են հասարակական կեանքի կանոնաւոր ընթացքը: Հատ անգամ մարդ չէ կարողանում հասկանալ, թէ որ աստիճանի վտանգաւոր արդիւնքներ են տալիս ալս կրքերը: Աւստրիայում գեղջկուհիք, ասում են, զառիկ (մերութեան) են ընդունում իրենց մարմնի կաշուին աւելի թարմութիւն և աչքերի հայեացքին աւելի արտայալտութիւն տալու համար: Սնափառութիւնից գրդուած մարդիկ աշխատում են շոալլ կեանք վարել և ալս պատճառով նրանք մեծ-մեծ յանցանքներ են գործում: Երեխաները ծխել են սովորում լոկ մեծերին նմանուելու համար: Թէսկէտ և հպարտութիւնը և սնափառութիւնը շատ նշաններով տարբերուում են միմեանցից, բայց և շատ անգամ այս զգացմունքները միմեանց հետ կապուած են լինում: Սնափառութեան ազդեցութեան տակ մարդ անդադար ձգտում է փառք ձեռք բերել, իսկ յայտնի բարձրութեան հասնելուց յետոյ սկսում է այն աստիճան յափշտակուել իւր «եսով», որ ինքնամոռացութեամբ կարծում է, թէ ինքը բոլոր շրջապատողներից վեր մի հանճար է: Առաջ նա միմեայն սնափառ էր, իսկ ալժմ սկսում է և հպարտ լինել: Առաջ նրան հետաքրքրում էր հասարակաց կարծիքը, իսկ ալժմ նա ձգտում է իշխանութեան և յարգանք է սպառում ուրիշներից:

Տատ անգամ շրջապատողներն են մեղաւոր, որ մարդիկ հպարտանում են, բաւական է, որ մէկը մի բարձր

գիրք է ստանում՝ շրջապատողներն իսկոյն սկսում են քծնել նրա առաջ, գովել նրա մեծ ինելքը և ընդունակութիւնները, բնաւորութիւնը և հոգին։ Կամաց կամաց նա ընտելանում է այս գովեստներին, որ նրա համար խորին պահունջ է դառնում։ Եւ նո շատ անգամ է վնաս իւր մարդկալին արժանաւորութիւնների լսում է այս տեսակ գովեստներ։

V.

Հպարտութիւնը և սնափառութիւնը այնպիսի արատներ են, որ շատ տարածուած են այժմ շնորհիւ ժամանակակից դաստիարակութեան։ Մանկան փոքր հաստից մենք սովորեցնում ենք նրանց կալծելու թէ նրանք շատ ընդունակ, խելօք, գեղեցիկ և շատ ուրիշ արժանիքներով օժտուած են։ Բաւական է, որ երեխան մի խելօք խօսք ասի, մի փոքր շնորհքով պարէ կամ նուագէ՝ և մենք երկինք ենք հասցնում նրան։ Բայց լեռոյ մենք ինքներս զարմանում ենք թէ որտեղից է ծագել երեխալի մէջ ինքնափստահութիւնը, հպարտութիւնը և գովեստ ստանալու ծարաւը։ Ի՞նչ խօսք, նրա խուսելու համար պէտք է գովել, բայց միշտ պէտք է գովել միմիայն ըստ արժանաւոյն և տեղին թերի դաստիարակութիւնը և անխտիր գովասանքները սաստիկ կորստաբեր ազդեցութիւն ունին երեխալի վրայ։ Փոքր հասակից երեխալին պէտք է սովորեցնել կարգապահութեան, համեստութեան, մաքրութեան և հնազանդութեան, որպէս զի մեծամիտ չգառնայ։ Իրենց գիտութեան մասին մեծ կարծիք ունենալու պատճառով հպարտ և սնափառ մարդկանց բժշկելու համար պէտք է նրանց սովորեցնել սեփհական սխալները խոստովանելը։ Խակ երբու այս տեսակ մարդը սկսում է ճանաչել իւր սխալները՝ նա վերջը դառնում է շատ համեստ և պարտաճանաչ։ Առհասարակ եթէ մենք կամենում ենք դաստիարակութեան միջոցով բժշկել երեխալին հպարտութիւնից և սնափառութիւնից, մենք պէտք է գործենք բացի խրատներից և սեփհական օրինակով։ Եւ իսկապէս ինչով է մարդը հպարտանում, եթէ ոչ առողջութեամբ,

գեղեցկութեամբ, հարստութեամբ և գիտութեամբ։ Բայց
ինչ է առողջութիւնը. բաւական է մի հակառակ քա-
մի, մի ժանտախտ կամ մի այլ պատահական դէպք և
մեր առողջութիւնը ոչնչանում է։ Նոյնը կարելի է
ասել և գեղեցկութեան մասին. թէպէտ և ճիշտ է, որ
գեղեցկութիւնը մի պարզե է, որ սակաւ ընտրեալնե-
րին է վիճակում, բայց մի՛թէ գեղեցկութիւնը մի հաս-
տատ և ամուր երեսլի է։ Հիւանդութիւնը, վիշտը,
կարեքը այնպէս են ազգում, որ գեղեցկութիւնը թա-
ռամում է առանց որևէ է հետք անգամ թողնելու։
Դիտութեամբ ևս հպարտանալու մարդս ոչ մի խելացէ
հիմք չունի, որովհետեւ գիտութիւնը այսուամենալիւ
մարդուս խելքի արգասիք չէ։ Ամեն մի տգէտ, մի գիւ-
ղացի, մի ողորմելի աղքատ կարող էր նոյն գիտութիւնը
ունենալ, ինչ որ գիտնականները, եթէ այլ պայմաննե-
րում մեծանար։ Կարդացածը, սովորածը կամ լսածը
մտաբերելը այնպիսի արժանիք չէ, որ մարդ նրանով
հպարտանալ։ Դիտութիւնը իսկապէս ուրիշների մտքե-
րի և գիտողութիւնների մտաբերելն է և առհասարակ
մարդկալին կեանքը առանձին հիմք չէ տալիս հպար-
տութեան։ Նատ անգամ երեկուալ հսկան թուլցած
հիւանդութիւնից, երեկուալ հարուստը տքնում է աղ-
քատութիւնից, երեկուալ աշխատող ձեռքը և մտածող
գլուխը այսօր անշնչացած է։ Ոչ բժիշկը և ոչ օրէնս-
դիրը ոչ մի առանձին միջոց չունին բժշկելու մարդ-
կալին հոգու այս ախտերը։ Միմիալն կրօնը և բարոյա-
կան գիտակցութիւնը կարող են օգտաւէտ լինել հպար-
տութեան և սնափառութեան դէմ։ Կրօնն է, որ մար-
դուն գիտակցել է տալիս թէ նա տիեզերքի և Աստու-
ծոյ առաջ մի չնչին արարած է, ուստի և ոչ մի իրա-
ւունք և հիմք չունի հպարտանալու։

Վերջացնելով Դէսկիւրէի գեղեցիկ բրօշիւրի համա-
ռօտ պատմուածքը, աւելորդ չենք համարում մի քանի
նկատողութիւններ անելու։ Հպարտութիւնը և սնափա-
ռութիւնը արեկելքում և առհասարակ Ասիայում աւելի
տարածուած արատներ են քան Եւրոպայում։ և այս
երեսլի շատ հսկանալի է։ Բաւական է մի թեթեա-
կի հայեացք ձգենք մեր շրջապատող հասարակութեան

վերալ համոզուելու համար, որ ներքին արժանաւորութիւններից զուրկ մարդիկ միայն կարող են հպարտ և սնափառ լինել, որովհետև այս յատկութիւնների շնորհիւ միայն կարողանում են իրենց գիրքը պահպանել։ Աւելի լուսամիտ հասարակութեան մէջ ալդախիսի յատկութիւնների և արտաքին ձեռքի և կեղծ արժանաւորութիւնների շնորհիւ ոչ տպրել կարելի է և ոչ յաջողութիւն ունենալ, որովհետև այնտեղ հասարակութիւնը գիտէ գնահատել մարդու իսկական արժանաւորութիւնները և զոկել կեղծիքը ճշմարտից։ Առհասարակ պատմութիւնը հարիւրաւոր և հազարաւոր օրինակներ է տալիս, որ ճշմարտութիւնը և բարիքը, համեստութիւնը ու օրինաւորութիւնը վերջնական յաղթանակ են տանում։ Զպէտք է ի հարկէ շանալ ժամանակաւոր սխալներով, որովհետև ճշմարտութիւնը ու լօգիկան, որ կեղծիքի, հպարտութեան և սնափառութեան հակառակ հասկացողութիւններ են, ամբոխի համար ուշ են հասկանալի դառնում։ Ոչ միայն անհատներ, ալլ և ահուելի պետութիւններ շատ անգամ պատժւում են, երբոր ճշմարտութիւնից և լոգիկալից հեռանում են ու սնափառութիւնից կամ անարժան հպարտութիւնից գրգուած մոռանում են յաւիտենական արդարութեան օրէնքները։ Այս իսկ պատճառով կործանուեց Հռոմը, Բաբելոնն ու Հրէաատանը, որպէս և Մեծն նապօլէօնը Ալո, միմիայն արդարութիւնը ու ճշմարտութիւնը, լօգիկան և ճշմարիտ խելքը և ոչ արտաքին որժն է տիրում աշխարհին։ Այս ճշմարտութեան ուժը հասկանալու համար պէտք է միմիայն ուշադրութեամբ համեմատել եւրոպակի և Ասիայի գերը և ուժը և հասկանալ, որ Արոպական սկզբունքներն և հասկացողութիւնները ամեն տեղ իրենց գերազանց ուժը արտայալառում են, ուր մուտք են գոլծում։ Իսկ իսկական երոպացին, Գլադիստօնն ու Կանտը համեստութեան կատարեալ տիպարներ են եղել։